ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի N626-Լ ԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N 650–Լ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

___ _____2019 թ. N ____- Լ

Հայաստանի Հանրապետության ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի N626-Լ ԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N 650–Լ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի և վարչապետի 2019 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի նախագծի մշակման, քննարկման, միջոցառումների կատարման ընթացքի նկատմամբ հսկողության և հաշվետվությունների ներկայացման կարգը հաստատելու մասին» N244-Լ որոշման 6-րդ կետի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի «**Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին>>** N626-Լ որոշման հավելված

1) 2-րդ կետի «Կատարման ժամկետը» սյունակում «2019թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ» բառերը փոխարինել «2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ» բառերով,

2) 3-րդ կետի «Կատարման ժամկետը» սյունակում «2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ ֆինանսավորման առկայության դեպքում» բառերը փոխարինել «2023թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ» բառերով,

3) 4-րդ կետի «Կատարման ժամկետը» սյունակում «2020 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ («ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո)» բառերը փոխարինել «2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին>> N 650-L որոշման 1-ին հավելվածի.

- 93.1 կետի «ժամկետ» սյունակում «2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ» բառերը փոխարինել «2023թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ» բառերով,
- 93.4 կետի «ժամկետ» սյունակում «2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ» բառերը փոխարինել «2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ» բառերով,
- 94.1 կետի «ժամկետ» սյունակում «2019թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ» բառերը փոխարինել «2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ» բառերով,
- 94.2 կետի «ժամկետ» սյունակում «2020թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ» բառերը փոխարինել «2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ» բառերով: